ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 12

ԵՊՀ ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

06.07.2023 թ. ք. Իջևան

Առցանց կազմակերպված նիստին մասնակցում էին գիտական խորհրդի նախագահ Ա. Մարգարյանը, քարտուղար Ա. Ալեքսանյանը, Գ. Հովհաննիսյանը, Թ. Վարդանյանը, Ա. Պոտոսյանը, Գ. Ալեքսանյանը, Ա. Սարիբեկյանը, Ա. Ուլիխանյանը, Պ. Ասլիբեկյանը, Գ. Ավետիսյանը, Դ. Աֆյանը, ֆակուլտետի ՈՒԽ-ի նախագահ Թ. Ջանվելյանը, Լ. Մնացականյանը:

Նիստի օրակարգը ներկայացրեց Ա. Մարգարյանը:

Օրակարգ

1. Ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների 2023-2024 ուստարվա անհատական բեռնվածությունների ներկայացման և քննարկման մասին (զեկ.Ա. Սարիբեկյան, Գ. Հովհաննիսյան):
2. Ֆակուլտետի դեկանի ամփոփ հաշվետվություն (զեկ. Ա. Մարգարյան):

Բաց քվեարկությամբ 12 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց.

- Հաստատել նիստի օրակարգը:

1. ***Լսեցին.- Ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների 2023-2024 ուստարվա անհատական բեռնվածությունների ներկայացման և քննարկման մասին (զեկ. Ա. Սարիբեկյան, Գ. Հովհաննիսյան):***

Ա. Սարիբեկյանն ու Գ. Հովհաննիսյանը հայտնեցին, որ մասնագիտական ամբիոններում կատարվել է 2023-2024 ուստարվա աշխատանքային ուսումնական պլանով նախատեսված դասընթացների բաշխումը: Առաջիկայում կբաշխվեն նաև ավարտական աշխատանքները: Ամբիոնների պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամները իրազեկվել են 2023- 2024 ուստարվա իրենց անհատական բեռնվածությանը:

Զեկուցողները տեղեկացրին, որ անհատական բեռնվածությունները տրամադրվել են ամբիոնների դասախոսներին: Վերջիններս պետք է մինչև սթ. օգոստոսի 31-ը ամբիոններ ներկայացնեն առաջին կիսամյակի իրենց դասընթացների ծրագրերը, ինչպես նաև Moodle հարթակում տեղադրեն այդ դասընթացներին վերաբերող բոլոր նյութերը:

Գ. Հովհաննիսյանի խոսքով՝ անհատական բեռնվածությունը սահմանելիս առաջնորդվել են նախորդ ուստարվա բաշխվածությամբ: Նա գտնում է, որ դասախոսի դրույքի համալրման դեպքում լրացուցիչ ժամերի դասավանդումը պետք է իրականացվի ժամավճարով:

Դասավանդման նպատակահարմարությունից ելնելով՝ որոշ դասընթացների դեպքում կատարվել են կիսմայակային տեղափոխություններ:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.10 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- 2023-2024 ուստարվա Ընդհանուր տնտեսագիտության և Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնների անհատական բեռնվածությունների մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

2. ***Լսեցին- Տնտեսագիտություն ֆակուլտետի դեկանի հաշվետվությունը (զեկ. Ա. Մարգարյան):***

Ներկայացնելով ֆակուլտետի 2022-2023 ուստարվա հաշվետվությունը՝ Ա. Մարգարյանը հայտնեց, որ ֆակուլտետի գործունեության համար հիմք են ծառայել ԵՊՀ ԻՄ ռազմավարական ծրագիրը, կանոնադրությունը և Տնտեսագիտության ֆակուլտետի 2021-2022 ուստարվա աշխատանքային պլանը: Ֆակուլտետում գործում է երկու մասնագիտական ամբիոն՝

- Ընդհանուր տնտեսագիտության
- Տուրիզմի կառավարման և մշակութաբանության

Ֆակուլտետում դասավանդող պրոֆեսորադասախոսական անձնակազմը բաղկացած է 36 հոգուց, որից 5-ը՝ պրոֆեսոր, 7-ը՝ դոցենտ, 12-ը՝ ասիստենտ, 12-ը՝ դասախոս:

Ուսումնական տարվա ընթացքում կազմակերպվել են սեմինարներ, դասախոսների շրջանում խորհրդակցություններ և քննարկումներ «Moodle» էլեկտրոնային հարթակի օգտագործման վերաբերյալ, դասընթացների որակի ապահովման մեխանիզմների վերաբերյալ՝ զարգացնելով մանկավարժական առաջավոր փորձի խրախուսման և տարածման մեխանիզմները, նպաստելով ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների ներդրմանը: Ֆակուլտետում արդյունավետ գործում է կրթական ծրագրի ղեկավարի ինստիտուտը: Գործող երկու կրթական ծրագրի մասնագիտական ամբիոններում իրականացվել է ՀԲ-ով կրթական դասընթացների վերլուծություն: Վերանայվել են ֆակուլտետի «Ֆինանսներ» և «Զբոսաշրջություն» ԿԾ-երում դասավանդվող դասընթացների փաթեթներում գնահատման մեթոդները: Դասախոսները և ԿԾ պատասխանատուները հանդիպումներ են կազմակերպել ուսանողների հետ և քննարկել են նրանց

առաջարկությունները: ԿԾ-ի ղեկավարի կողմից ուսումնասիրվել է գործող ԿԾ վերջնարդյունքների կապը համապատասխան դասընթացների վերջնարդյունքների և գնահատման մեթոդների հետ: Վերանայվել են դասավանդվող դասընթացներից յուրաքանչյուրի համար մշակված գնահատման նորմերը և չափանիշները՝ համապատասխանեցնելով դասընթացի կրթական վերջնարդյունքների վրա հիմնված գնահատման մեթոդներին:

Համաձայն հաստատված կարգի՝ ֆակուլտետում իրականացվել է գործող կրթական ծրագրերի վերանայման գործընթաց: Ձևավորվել են աշխատանքային խմբեր, հաստատվել են աշխատանքների կատարման ժամանակացույցերը և սահմանված ժամկետներում ԿԲԴՎ բաժին են ներկայացվել վերանայված ԿԾ-երը: Ակադեմիական ազնվությունն ապահովելու նպատակով՝ ավարտական աշխատանքներում տեղ գտած գրագողությունը կանխելու նպատակով, իրականացվել են քննարկումներ ուսանողների հետ, ներկայացվել է համապատասխան կարգը: Բոլոր դասընթացների (հետազոտական բաղադրիչով, առանց հետազոտական բաղադրիչի) շրջանակում ուսանողների համար կազմվել են անհատական և խմբային առաջադրանքներ: Ներկայացվել են ավարտական աշխատանքների արդիական, պարտադիր հետազոտական բաղադրիչով, չկրկնվող թեմաներ: Ավարտական աշխատանքի կարևոր բաղադրիչ է դարձել ուսանողների կողմից լրացվող հայտարարությունը ակադեմիական ազնվության մասին: Գործընթացները կազմակերպվել են գործող կարգերին համապատասխան: «Ֆինանսներ» (ըստ ոլորտի) կրթական ծրագիրը իրականացվում է ԿԲ Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնի հետ: Ուսանողների համար կազմակերպվել է մեկ այց նշված կենտրոն՝ սեմինար-քննարկմանը մասնակցելու նպատակով: Գործադրվել է ԵՊՀ դասախոսական կազմի գործունեության բազմագործոն գնահատման կարգը բոլոր ամբիոններում, այդ նպատակով.

- քննարկվել են համապատասխան հարցման արդյունքները,
- ՄԿՈԱ բաժնի հետ մշակվել են առանձին դասընթացների վարման արդյունավետությունը գնահատող հարցաթերթեր,
- Իրականացվել են հարցումներ առանձին դասընթացների վերաբերյալ,
- Փոխադարձ դասալսման արդյունքների քննարկում,

ԵՊՀ ԻՄ ԿԲԴՎ բաժնի կողմից կազմակերպվել են մի շարք առցանց վերապատրաստման դասընթացներ, որոնց մասնակցել են ֆակուլտետի դասախոսներ մասնավորապես.

- «Հետազոտական աշխատանքի պլանավորում, իրականացում, ներկայացում»,

Ֆակուլտետի դասախոսների 90%-ը մասնակցել է նախորդ տարիներին կազմակերպված վերապատրաստման դասընթացներին և տիրապետում է էլեկտրոնային ռեսուրսներ ստեղծելու և մատուցելու հմտություններին:

Ա. Մարգարյանը հաղորդեց, որ Տնտեսագիտության ֆակուլտետում 2023-2024 ուստարում առաջին կիսամյակում սովորող ուսանողների թիվը կազմել է 131, որից 33-ը՝ անվճար: 28 ուսանող ստացել է պետական, 3 ուսանող՝ անվանական կրթաթոշակ: Երկրորդ կիսամյակում ուսանողների թիվը կազմել է 131, որից 33-ը՝ անվճար: 29 ուսանող ստացել է պետական կրթաթոշակ, 3-ը՝ անվանական:

Ա. Մարգարյանը շեշտեց, որ 2022-2023 ուստարում ֆակուլտետի աշխատանքները արդյունավետ կազմակերպելու համար սահմանված ժամկետներում իրականացվել են հետևյալ ընթացիկ գործընթացները.

- կազմվել են դասացուցակը, անհրաժեշտ ժամանակացույցերը,
- ամբիոնները ապահովել են պրակտիկաների ծրագրերը, ավարտական աշխատանքների ցանկը և դրանց իրականացման գործընթացի ուղեցույցերը,
- ամբիոնային ծանրաբեռնվածության հիման վրա իրականացվել են 2023-2024 ուստարվա համար անհատական բեռնվածության նախնական բաշխում և քննարկումներ դասախոսների հետ:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.4 կետով՝ Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին. -1. Հավանություն տալ Տնտեսագիտության ֆակուլտետի աշխատանքային պլանով 2021-2022 ուստարում նախատեսված գործողությունների վերաբերյալ դեկանի հաշվետվությունը:

2. Տնտեսագիտության ֆակուլտետի 2021-2022 ուստարվա գործունեությունը գնահատել բավարար:

Գիտական խորհրդի նախագահ՝ *Ա. Մարգարյան*

Քարտուղար՝ *Ա. Ալեքսանյան*